

մեզ յօտարութեանս: Նա՛եւ յայնմ ժամու պատահել վրդ-պտին Մարտիրոսի, զի դեռ եւս թաքստի կայր եւ յահէ ոսոխաց ոչ ել, բայց յետ աւանդման հոգւոյն երեկոյն եկն, զորոց աղէտ, աշխատանք եւ կսկիծ սլոյ անբուժելի դիպեցաւ մեզ, զորոյ զիտխանակն զքեզ ունելով մխիթարիմք, յոր եւ հայցեմք յապէնիազ եւ ի բարեգութ մտնասար. Հոգւոյն, զի մխիթարեալ սիտիեացէ զսիրտ մեծի սրբոյ հօրդ եւ զպաղատութիւն ամաց նորա յաւելցէ ի սուրբ կեանս քո, եւ ի պարծանս մեր յամենից պահեսցէ անփորձ եւ խաղաղական կենօք, ամէն:

Բայց յայսմեաէ հարկ եղիցի մեզ պատմել, որ ինչ անցք անցին զկնի վախճանի սրբոյ հօրն հասարակաց, զի յետ աւանդման հոգւոյն՝ հասին առ մեզ վրդ-պտն Գրիգոր Կեսարացի եւ Ած.ատուրն թմբուկ առ ձայնեալ՝ եկեալք ի Կեսարիոյ, զոր կոչեալ զնոսա մեօք հանդերձ Սուրբչի օղլի Ած.ատուրն, եթէ զրերեալ զբամդ թէ ինձ տայք իմ պարտուց տեղ, զինչ խարձ որ զնայ մինչեւ Խ. դռնն, ես տաց թաղել զհայրն մերձ ի սուրբ Ած.ածիկն, զոր եւ մեր հաւանեալ՝ ասացաք նմա առնել թէ հնար իցէ, եւ մեք տամք ի նա զեկեալ նուէրքն: Յորոց միջի պատահեալք Ղայսէրցիք զնացեալ պուլքութու բերին ի Վէղիբէն եւ տարեալ առ ի Ստամպոլ էֆէնտին սիճիլ արարեալ եւ նայիպ բերեալ քէւչ արարին՝ ծրագրելով նայիպին զտեղի թաղմանն յաջ կողմն եկեղեցւոյն ի զլուխ այգամէին, զի թաղեսցի յերեքշաբաթոջ: Զոր անիծեալքն ի քէն եւ յամենայն սրբոց Քօմուրճին եւ իւր Նեոան զաւակ չերեմիայն անկեալ առ դրացովք եւ գումարեալ զամենայն մերձակայ բնակիչք տաճիկսն, զլուխ առնելով յինքեանց զՂօրղուռ ոմն յոյն, որ է ի դրան վէղիբ քէհիային, եւ նոքօք զրդեալ զքէհիայն, զՊատրիկ երէց թորոսն ի զլուխ առնելով, արարին խափանումն եւ բռնութեամբ ետուն հանել ի քաղաքէն եւ տարեալ ի Բէկ օղլին՝ թաղեցաք: Այսքան չարիք ի Պատրիկ թորոս չերիցէն եւ ի Քօմուրճէն եւ իւր չար զաւակէն եւ: Պատճառն այս էր, որ նզովեալ թոռն ունի արեղայ եղեալ յայսմ ամի, բերին

առ հոգեւոր տէրն յառաջ քան զՀամբարձումն եւ բազումս թախանձեցին տալ նմա իշխանութիւն վարդապետութեան, զոր ոչ հաւանեալ զՎեհն, ասելով՝ թէ տղայ է եւ նոր արեղայ, երթեալ էջմիածինն ուսցի զկատարելութիւն ուսման եւ ի դէպ ժամանակի կատարեսցի խնդիր ձեր: Բայց իրրեւ եկն համբաւ նզովից նոցին, որ ի քէն, վարեաց եւ աքսորեաց յինքենէ եւ այժմ բնակի մերձ ի Նիկիոմիդայ Արմաշու վանք կոչեցեալ, առ Մարկոս եպիսկոպոսն: Յայսմ պատճառէ այսքան չարիք զործեցին հրապարակաւ զոչելով զարարս իւրեանց մեծաւ անզգամութեամբ: Իսկ կտակ Վեհին այս եղև առաջի բազմաց, զի հարկեալ ոմանց՝ թէ ո՞վ իցէ յետ քո նստելոց յԱթոռն, ասացեր էր՝ թէ յառաջ ասացեր եմ վասն Սահակ վրդ-պտին, զնոյն եւ այժմ վերստին հաստատեմ կտակաւ, նա՛ է իմ եւ Սր. Աթոռոյն ժառանգն: Յետոյ զմեզ կոչեաց եւ զարձեալ կրկնեաց զնոյն բան, մեք ասացաք՝ թէ լինի թէ ըստ ժամանակիս բերմանցն չուզեն բազումք զիսահակ վրդ-պտն եւ լինի խոռվութիւն բազմաց, զի՞նչ արասցուք. ասաց հրապարակաւ՝ թէ ըստ իմ կտակիս եթէ ոչ կամեսցին լինել զիսահակ վրդ-պտն կաթուղիկոս, միաբանեալք առանց խոռվութեան, զով ոք կամին՝ ընտրեալ դիցեն յԱթոռն, զի մի՛ յաղազս երկպառակութեան աւերեսցի սր. Տունն. եւ յանձն արար Տեառնդ Վեհի եւ Մարտիրոս վրդ-պտին հոգալ զայս: Դարձեալ կրկին անգամ հարցաք սր. հօրն՝ եթէ այս պարտուցս բազմութեան զի՞նչ արասցուք, ո՞վ տացէ պատասխանի: Քանզի որքան եկն ի քաղաքն վեց անգամ սիւնհոգոս արար եւ ոչ կարաց պարզել զհիսապն, որ ընդ խոսրովին, թէպէտ կամէր վրէժխնդիր լինել նմա սաստիկ, սակայն Մարտիրոս վրդ-պտն չէր ի միջի եւ չուէր զօք ընկեր, վասն այնորիկ օր աուր յամելով մնաց հիսապն անկատար: Դարձեալ Վանցի Նիկողոս չերէց ոմն, զոր վէթիլ եղեալ Ստեփաննոս վրդ-պտին Մեղրեցւոյ՝ մինչ պատրիարկ էր աստ, Ք. քիսայի հիսապ ունելով յայնժամ, զոր վճարեաց Հոգեւոր տէրն. իսկ այժմ զարձեալ կրկին դաւէ արար՝ չկարաց